



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

14314

1879

37

JU-51

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՄԱՐԱՏՈՒԹԵԱՆ

ԳՈՐԾԱԴԻՐ ԺՈՂՈՎՈՅ

ԽԵԶԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1878 Հոկտեմբեր 1 — 1879 Մարտ 31

Ա.Պ.Ա.ԶԱՐԿԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԺՈՂՈՎՈՅ

ԳԻՅՈՒ.ՈՒԹԻՒՆՔ

ՆԱԽԱԲՆՉԱԿԱՆ ԴԻՒԱՆԻ



57

Խ.

Կ. ՊՈՂԻՄ

ՏՊԱՐԴ. Վ. Յ. ՄԱՐԴԱՐԵԱՆ

1879

37

Խ-51 Կ.

370

-2328-Տ



ՆՊԱՑԱԿ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷջ ԶՐԻԱՊԵՍ

ՈՒՍՈՒՄ ՏԱՐԱԾԵԼ

ԹԻԶՈՒՆԻ ԳԱՐԱՌԵՆ ՍԿՍԵԼՈՎ.

8740

Մեծապատիւ Ատենապետ Ընդ ժողովոյ
Խիզանի Ուստումնասիրաց Ընկերութեան

Թէպէտ Գործադիր ժողովս իւր հրաժեշտը
կանոնագրութեան վաւերացման հետ կցել մտա-
դիր էր, սակայն օրուան տարաժամիլն ստիպեց
զինքն Ապրիլի օրինական նիստին թողուլ,
Ահաւասիկ այսօր Համարատուութեան հետ կցած
է իւր հրաժեշտն ալ:

Ժողովս իւր Համարատուութիւնը երեք մասի
բաժնած է . Ա. Նպատակի Գործադրութեան
ձեռնարկ : Բ. Ընկերութեանս հասոյթը ընդար-
ձակելու համար տարուած ջանք : Գ. Հաշուե-
կչիու :

Ա.

Նպատակի Գործադրութեան ձեռնարկ

Գործադիր ժողովս վասահելով իւր բաժա-
նորդաց, և միանդամայն դիտնալով թէ նպա-
տակի Գործադրութեան ձեռնարկութիւնը Ըն-
կերութեանս յառաջադիմութեան և ընկերաց ե-
ռանդուն աշխատութեան պատճառ պիտի լինի,
Պ. Պաշտամար Երէցեանն Խիզանի մէջ բացուելիք
Ուստումնասիրաց վարժարանին գասատու կարգեց

2716 - 57

որ և դպրոցական պիտոյքներով իւր պաշտօնա-
տեղին ուղարկեց :

Բայց գժբաղդաբար Գործադիր ժողովս նոյնի
Պոնտոս հասնելը խմացող ինքնագիր նամակէն
զատ ոչինչ ստացած է մինչև ցայսօր . սակայն
անփոյթ չը մնալով աշխատութիւնը խնայած չէ :
Հեռագիր զարկաւ Վան՝ թէ արդեօք Պ. Պաղ-
տասար հոն, և անտի ի Խիզան ուղեւորած է . որոյ
Ճիզրէէն ողջամբ ելած ըլլալուն պատասխանը
ստացաւ :

Այս պատասխանը գոհացուցիչ չը գտնելով՝ Պ.
Պաղտասարի կրկին ստիպողական նամակներ գը-
րեց :

Նաև Խիզանի Ա. խաչ վանքի վանահայր Սահակ
վարդապետի, Բաղէշ մեծ . Գրիգոր և Աւետիս
եղբարց պաշտօնապէս, և այլոց մասնաւոր նա-
մակներ գրուեցաւ, ինչպէս Վան՝ Պ. Փորթու-
գալեանի և Պ. Քէպապճեանի, որոց մինչև ցայ-
սօր անպատասխանի մնալուն՝ Ժողովս Խիզանի
վրայ տալ փափաքած մանրամասն տեղեկութիւնքը
պատրաստել անկարող գտնուած է :

Բ.

Ընկերութեանս Հասոյթը ընդարձակելու համար
տարուած ջանք

Ինչպէս յայտնի է՝ Ընկերութիւնս կազմուած
էր 1877 մարտ 4ին, Խիզան դաւառի մէջ դըպ-
րոցներ բանալու համար, և մինչև 1878 սեպ-

տեմբեր վերջ ունեցերէր 90 անձ 112 բաժնեօք
և 56 Օսմանեան ոսկւոյ դրամագլխով . Ժողովս
յաջողեցաւ 90 անձն 557 ի, 112 բաժինն 790ի
և 56 Օսմանեան ոսկին 106 ի հասցնել գլխաւու-
րապէս իւր պատասխանատուութեան տակ թատր
մը ներկայացնելով, որոյ մանրամասնութիւնքը
Հաղուեկղուին մէջ կը տեսնուի :

Այս մասին չնորհակալեաց արժանի օժանդակու-
թիւն ընձեռնած են Դիմաքսեան Հմայեակ, Արբ-
ուանձեան Գարեգին, Պաղճեան Բարթողիմէսս
արժանապատիւ վարդապետներն, յատենի եկե-
ղեցւոյ և այլուր Ընկերութեանս յառաջադի-
մութեան համար պէտք եղած յորդորն և հրա-
ւէրը կարդալով :

Նոյնպէս Աւետիս Էֆէնտի Հարենց, որ իւր ա-
ջակցութիւնը չը զլացաւ ի նպաստ Ընկերութեանս
սպուտած թատրին ներկայացման ձեռնարկին :

Գ.

Հաշուեկշիու

Ժողովս երեք Հաշուեկշիու կը ներկայէ . Առաջինը
մասնառապէս Թատերական ներկայացման ծախ
քըն ու հասոյթը, Երկրորդը 1878 հոկտեմբեր 1ի
նախորդ Գործադիր ժողովոյ մեջ յանձնած օր-
ուան Ընկերութեանս ունեցած վիճակը կը ցուցնէ,
իսկ Երրորդը նոյն օրէն մինչև 1879 մարտ 51
ընդհանուր մտից և ելից հաշուեկշիուն է :

Ա.

ՀԱՇՈՒԽԵԿՇԻՌ

Թատերական ներկայացման 1879 փետր. 24

ՀԱՇՈՒԽԵԿՇԻՐ

19,280	Թղթադրամ տոմսակներէ գոյացեալ	
482	դր 20 փրաէն ոսկիի վերածեալ	
		5,993
202	մէճիտ . 0թեակներէ գոյացեալ	
	100 ին 7 տարրերութեամբ	
	ոսկիի վերածեալ	5,764
	Նուէր թատրոնի մէջ հաշաքուած	295
		—————
	գումար	8,054

ԾԱՀԱՔ

2,000	Թղթադրամ կանխավճար թառուրնի 444 դրէն ոսկիի վերածեալ	450
5,500	Թղթադրամ մասցորդ թատրոնի	
1,781	Թղթադրամ աթոռներու վարձք և այլ ծախք 482էն ոսկիի վերածեալ	1,309
8	մէճիտ Մեծ և փոքր յայտարարութեանց 100ին 7. 12 փրայ տարրերութեամբ ոսկիի վերածեալ	148
		—————
	գումար	2,107
		—————
9,010	արգիւնք դանձեալ	5,427
		—————
	Զանազաններէ ողահանչք	820
		—————
	գումար	8,054

Բ.

ՀԱՇՈՒԽԵԿՇԻՌ

ՆԱԽՈՐԴ ԴՈՐԾԱԴԻՐ ՃՈՂՈՎՈՅ

Սկսեալ 1877 Ապրիլ 1 ին մինչ 78 Սեպ. 50

ՄՈՒՏՔ

5,604	Թղթադրամ բաժանորդներէ գոյացած հասոյթ ոսկիի վերածեալ	1,116
1,877	Թղթադրամ նուիրատոմսներէ	664
1,221	Թղթադրամ Եկեղեցւոյ պնակներէ տոնախմբութեանց առթիւ	382
70	մէճիտ Նուէր Տէր Սահակ քահանայի ձեռամբ	1,516
		—————
	Տոկոս 100 ին 1	247
		—————
	գումար	5,725

ԵԼՔ

117	Թղթադրամ Տամսակի և կանոնագրի տպագրութեան	
78	Թղթադրամ Կնիքի փորագրութեան	
55	Թուղթ և տետրակ	
228	Գահեկան ոսկիի վերածեալ	87
	Պատրաստ գրամ	5658
		—————
	գումար	5,725

Գ.

ՀԱՇՈՒԵԿԾԻՐ

ԽԵԶԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Սկսեալ 1878 Հոկտ. 1 են մինչ մարտ 31

ՄՈՒՏՔ

Նախորդ հաշուեկղուին մէջ գըտ-	
նուած պատրաստ դրամ	3,638
Թատերական ներկայացումէ գո-	
յացեալ արդիւնք գանձեալ	5,127
5,682 Թղթադրամ Բաժանորդներէ	522
10 փրաէն միջին հաշուով ոսկի	
վերածեալ	705
2,589 Թղթադրամ Գործադիր ժողովոյ	
ձեռամի հաւաքուած նուէրք	579
50 փարայէն ոսկիի վերածեալ	629
Նուէր Պաղտասու Ազգ. վարժա-	
րանի Տնօրէն Սկաճեան Միհրան	
էֆէնտիէ	100
Ազգասէր Տիկինէ մը կանոնագրի	
տպագրութեան համար	100
Տոկոս մինչ մարտ 31	264
գումար	10,863

ԵԼՔ

Կանոնագրի և նամակի թուղթ	57
Կանոնագրի տպագրութեան	100
Թղթատարութեան	25

Ընդհանուր և Գործադիր ժողովոյ	
առենագրութեան տետրակաց	51
Հեռագրի	84
Ընդհանուր ժողովոյ հրաւիրագ-	
րոց թուղթի և տպագրութեան	48
Պ. Պաղտասար Երէցեանի ճանա-	
պարհորդութեան ժախք	500
Գրեանց	160
Պատրաստ դրամ	9,758
գումար	10,863

Ա.Ռ.Ա.Ջ.Բ.ՐԿՈՒԹԻՒՆՔ

Ժողովս իւր հրաժեշտը տալու միջոցին համա-
րառուութեան կը կցէ Ընկերութեանս օգտակար
երեք առաջարկութիւնք:

Ա. Ռ. Ա. Ջ. Ի Ն

Թղթադրամը գրէթէ հրապարակէ քաշուած
ըլլալով բաժնեգիներու ինչ սոսակով հաւաքուե-
լու խնդրոյ որոշումը Ընդհանուր ժողովոյ պատ-
կանին զգացած առ ձեզ կը դիմէ, և կը խնդրէ
որ մետաղեայ դրամ ընդունուի:

Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Ժողովս Ընկերութեան կեղրոնատեղի մը ու-
նենալու պէտքը զգալով, կառաջարկէ որ դրա-
սենեակի մը հաստատութիւնը ի նկատի առնուլ
բարեհաճիք:

ԵՐՐՈՐԴ

Ընկերութեանս Գործ. Ժողովը քաղաքակիրթ
ազգաց հետևելով, կառաջարկէ Ընկերութեանս
տարեդարձը տօնել Սահմանադրութեան տարե-
դարձին հետո:

Ժողովս ներքին կանոնադրութեան 17 րդ
յօդուածոյն համեմատ նախագնչական նիստե-
րուդ ներկայ գտնուելու համար Պարոն Համբար-
ձում Մքայէլեանը որոշեց:

Ժողովս Հիմնական կանոնադրութեան Ժէ րդ
յօդուածոյն համեմատ հետևեալ պատուարժան
անձինքներէ բաղկացեալ երկարտիկ զեղչեղի
ցանկ մը պատրաստած է, յաջորդ Գործադիր
ժողովոյ ընտրութեան համար :

Աղեքսանդր Մօմենեան

Անտօն Աէթեան

Թագւոր Փափազեան

Մկրտիչ Ամպարճեան

Մագսուտ Թօազատլիեան

Ցովիշաննէս Զմրուխտ

Ցովսէփ Նաճարեան

Յարութիւն Մրմեեան

Նշան Ճիշտանեան

Տիգրան Գարամաճեան

Կ. Պօլիո, Թ. Ապրիլ 1879

ՀԻՄՆԱԴԱՐԱՆ ԱՆԴԱՄՔ ԳՈՐԾ. ԺՈՂՈՎՈՅ

Ստորագրութիւն

Ցեարք

Խիզանի Ռուսումասիրաց Ընկերութեան Ընդ.
Ժողովոյ դիւանը 1879 ապրիլ 12 ին գումարուե-
լով Գործադիր Ժողովոյ մասուցած համարա-
տուութեան Տեղեկագրին վրայ հետևեալ դի-
տողութիւնները կը ներկայէ Ժողովոյդ:

Ա. Ընկերութեանս նպատակի գործադրու-
թեանը ամենէն կարևոր կէտն եղող վարժապե-
տի խնդիրը ցեր խոհուն մտածութեան ենթար-
կելով, դիւան հարկ կը համարի ծանուցանել որ
հոկտեմբեր 8 ին Խիզան գնալու համար հանրայ
ելնալ. Պ. Պաղտասար Երեցեանէ մինչև ցարդ
ու զղակի որ և է լուր մը ընդունած շըլալուն ա-
ղագաւ մանաւանդ Ընկերութեանս անդամներէն
Պ. Աքրահամ Թշոտնի Քէպապճեան ասկէց ա-
ռաջ Պ. Ա. Թընըլրեանի խոստացած ըլլալով որ
գարնան Խիզան գնալով Պ. Պաղտասարի վրայօք
լիուլի տեղեկութիւն հաջորդէ, հեռագիր քաշեց
Պ. Ռշտունիի որ իւր խոստումը ժամանակ կա-
տարելով իւր այս մասին հարկ եղած տեղեկու-
թիւնները կանխէ :

Բ. Բաժանորդագիններն մետաղեայ դրամի վե-
րածելու առաջարկութիւնը կընդունի և կադա-
ջարկէ դիւանը զայն մէջիտիկ դրամի վերածել,
որոշումը ընդհանրութեան թողլով :

Գ. Ընկերութեանս կեդրոնատեղւոյ մը հաս-
տատութեան առաջարկութիւնը կընդունի դիւ-
նըս և որոշումը Ընդհանուր Ժողովոյդ կը թողլու :

Դ. Ընկերութեանս տարեդարձի հանդէսը տօս
նելու նկատմամբ Գործադիր ժողովոյ բերած
առաջարկութեան սկսրունքը կընդունի, մանրա-
մասնութեան որոշումը Ընդհանուր ժողովոյ
թողլով։

Ե. Գործադիր ժողովոյ հրաժարականի ինդիրը
նկատողութեան առնելով՝ Ընկերութեանս կո-
չնազրին թէ՛ ըստդ յօդուածի տրամադրու-
թեամբն թէ՛ Գործադիր ժողովոյ անդամոց
երկու տարին մի անդամ երկուքին միշտն պաշտօ-
նէ գագրիլ և նոր ընտրութիւն հարկ է, սակայն
արդէն հինգ անդամոց տեղ այժմ միայն 3 ու-
նենալնուս պատճառաւ դիւանո կարծիք կը յայ-
տնէ իրենց հրաժարականը վերստին յետ դարձնել
և պահսած 2 անդամոց համար երկպատիկ ընտ-
րելեաց ցանկ պահանջել։ Դիւանո կը յուսայ որ-
այս կերպով իմաստուն գործ մը կատարած կըլ-
լայ Գործադիր ժողովոյ հրաժարականը յետ դար-
ձնելով և իրենց գտնեանդիլ ինդրելով, որուն
ուուղ միջոցի մէջ արդէն փորձը տեսնուեցաւ,
որուն համար դիւանս պարտ կզգայ շնորհակաս-
լութեան քուէ առաջարկել թէ Գործադիր ժո-
ղովոյ և թէ այն ամէն բարեսէր աղքայնոց որք
ջանացին օգտակար հանդիսանալ Ընկերութեանս։

12 Ապրիլ 1879

Հիմն Ընդհանուր առաջարկութեան գործադիր
Առողջապահութեան աշխատանքների համար
Ապրիլի 1879 թ/ 1922



Դիմում Ընդհանուր ժողովութեան

Խաչիկ	Յ. Սա	Ա. Առենապետ
Նշան	Գարագաշ	Բ. " "
Գատնիկ	Ն. Առատունին	Ա. Առենապետ
Գրիգոր	Վահոնին	Բ. " "

ՀՐԱԺԱՐ

ԳՈՐԾԱԴԻՐ ԱՆԴԱՄ

Վահրամ Յ.	Մարգարեան	Առենապետ
Աւետիս	Թքնկըրեան	Գանձապետ
Համբարձում	Միքայեան	Հայուակալ



2013

